*Հաստատված է «ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ*
*Գլխավոր տնօրենի 13.05.2026թ. թիվ 13/05/2026-Լ հրամանով*

# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ, ԻՆՏԵՐՆԵՏ ԿԱՊԻ ԴՈՄՈՖՈՆԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ
**(Հրապարակային օֆերտա)**

Սույն կանոնները հանդիսանում են Օպերատորի կողմից ֆիզիկական անձ բաժանորդներին ծառայությունների մատուցման հրապարակային օֆերտա՝ համաձայն ստորև սահմանված պայմանների և դրույթների:

## 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

**1.1. «Ընկերություն» կամ «Օպերատոր»** – «ԷՖ ՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որը հանդիսանում է սույն Օֆերտայով առաջարկվող ծառայությունների մատուցող կողմ՝ համապատասխան թույլտվությունների, լիցենզիաների և այլ անհրաժեշտը իրավասությունների հիման վրա:

**1.2. «Բաժանորդ»** – Սույն Օֆերտայի և Հավելվածի հիման վրա ընկերության կողմից սպասարկվող ֆիզիկական անձ, որն ամբողջությամբ և անվերապահորեն ընդունել է Օֆերտայի պայմանները՝ ստորագրելով համապատասխան Հավելված:

**1.3. «Օֆերտա-Կանոններ» կամ «Կանոններ» -** սույն կանոնները, որոնք Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ ժամանակ առ ժամանակ փոփոխել, լրացնել կամ ընդունել նոր խմբագրությամբ:

**1.4. «Հավելված»** – Օֆերտա-Կանոններ-ի հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է Բաժանորդի հետ համաձայնեցված անհատական պայմանները:

**1.5. «Ծառայություններ»** կամ **«Փաթեթ»** – Ընկերության կողմից Բաժանորդին մատուցվող Ինտերնետ կապի, Հեռուստաալիքների վերահաղորդման, Դոմոֆոնային, Մինիդոմոֆոնային սպասարկման և տեսախցիկների տեղադրման և սպասարկման, առցանց հեռուստատեսային և մեդիա հարթակի միջոցով թվային տեսադարանից ֆիլմերի դիտման, այդ թվում՝ վարձակալության և գնման ծառայությունների համախումբ կամ նշվածներից որևէ մեկ առանձին ծառայություն:

**1.6. «Սարք(եր)ավորում(ներ)»** – Ընկերության կողմից տրամադրվող կամ տեղադրվող տեխնիկական միջոցներ, այդ թվում նաև՝ տեսախցիկներ և դոմոֆոնային համակարգեր, ինչպես նաև Բաժանորդի կողմից օգտագործվող վերջնակետային սարքավորում (հեռուստացույց, համակարգչային սարքավորում, բջջային հեռախոս), որի միջոցով Ծառայություն ստանալը թույլատրված է Օպերատորի կողմից:

**1.7. «Տեղադրման հասցե»** – Օպերատորի կողմից Բաժանորդին ծառայությունների մատուցման հասցե:

**1.8. «Ոչ կոմերցիոն օգտագործում»** – Ծառայությունների օգտագործում միայն անձնական, ոչ առևտրային նպատակներով:

**1.9. «Վավերապայմաններ»** – Հավելվածում նշված պարտադիր պայմաններ ծառայությունների մատուցման համար:

**1.10. «Ակտ՝ հանձնման-ընդունման»** – Ծառայության ակտիվացումը կամ սարքավորման տրամադրումն արձանագրող փաստաթուղթ, որը կարող է ներառվել նաև Հավելվածում:

**1.11. «Պայմանագրի ժամկետ»** - Ծառայության մատուցման՝ Հավելվածով սահմանված որոշակի կամ անորոշ ժամկետ:

**1.12. «Ամսական վճարման չափ» կամ «Ամսավճար»** - Ծառայության դիմաց Բաժանորդի կողմից ամսական կանխավճարային կարգով վճարվող գումար ՝Կանոններով և Հավելվածով սահմանված չափով և կարգով:

**1.13 «Ակցիա»** - Օպերատորի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքում իրականացվող միջոցառում, որն ուղղված է առկա և հնարավոր Բաժանորդների շրջանում Ծառայությունների առաջխաղացմանը կամ իրացման ծավալների մեծացմանը:

**1.14. «Հեռուսաալիք»** - Օպերատորի կողմից կաբելային եղանակով վերահեռարձակվող հեռուստաալիքներ:

**1.15. «Ինտերնետ կապ»** - Կաբելային եղանակով մատուցվող/տրամադրվող ինտերնետ ծառայություն:

**1.16. «Դոմոֆոն/Մինի դոմոֆոն»** - Օպերատորի կողմից սպասարկվող «Խելացի» դոմոֆոնային համակարգ.

**1.17. «Դոմոֆոնային սպասարկում»** - բազմաբնակարան շենքերում «Խելացի» դոմոֆոնային համակարգի և դրա հավելվածի սպասարկման ծառայություններ, որը ներառում է դռան (մագնիսի, շվեցարի և փականի) սպասարկում.

**1.18. «Մինիդոմոֆոնային սպասարկում»**- միայն մեկ անձի հետ կնքվող պայմանագրով «Խելացի» դոմոֆոնային համակարգի և դրա հավելվածի սպասարկման ծառայություններ, որը չի ներառում դռան (մագնիսի, շվեցարի և փականի) սպասարկում.

**1.19. «Շենք (մուտք)»**- ՀՀ օրենսդրության իմաստով բազմաբնակարան շենք և/ կամ դրա որոշակի մուտք:

**1.20. «Պայմանագիր»** - սույն կանոնները և Ընկերության և Բաժանորդի կողմից ստորագրված Հավելվածը միասին:

**1.21. «Էլեկտրոնային հավելված»** - Օպերատորի կողմից վարվող Fnet և/կամ Fnet Smart Home հավելված:

**1.22. «Էլեկտրոնային համագործակցության պայմաններ»** - Օպերատորի կողմից հաստատված և Օպերատորի պաշտոնական կայքում հրապարակված Օպերատորի և Բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորող էլեկտրոնային համագործակցության պայմաններ:

**1.23. «Օպերատորի ցանց (Ցանց)»**՝ Օպերատորի կողմից շահագործվող հաղորդման համակարգ, իսկ համապատասխան դեպքերում նաև միացնող - անջատող կամ ուղղորդող սարքավորումներ և այլ ռեսուրսներ, որոնք թույլ են տալիս հաղորդել ազդակներ (ազդանշաններ) մալուխով, օպտիկական կամ այլ էլեկտրամագնիսական միջոցներով, ամրակցված ցանցով և շարժական կապի երկրային ցանցով, էլեկտրական էներգիայի գծային համակարգերով այնպես, որ դրանք օգտագործվեն ազդակների հաղորդման համար՝ անկախ հաղորդվող տեղեկատվության տեսակից:

1.24. «**Ապակոդավորման միջոցներ**»՝ Օպերատորի կողմից տրամադրվող ծրագրային ապահովում, այդ թվում՝ կոդ, գաղտնաբառ և այլ նույնականացման տվյալներ, որոնք Բաժանորդին թույլ են տալիս ընդունել Տեսալսողական ծրագիրը կամ այլ տեղեկատվությունը:

1.25. «**Սփռման տարածք**»՝ աշխարհագրական տարածքը, որտեղ մատուցվող Ծառայությունները

տեխնիկապես հասանելի են և թույլատրված են ՀՌՀ կողմից տրամադրված համապատասխան լիցենզիայով:

1.26. «**Տեսալսողական ծրագիր**»՝ Տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կողմից սահմանված Տեսալսողական նյութերի հեռարձակման հաջորդականություն:

1.27. «**Տեսալսողական նյութ**»՝ Տեսալսողական ծրագրի բաղկացուցիչ մաս կազմող ամբողջական ինքնուրույն միավոր, որի համար նախատեսված է անվանում և հեռարձակման ժամ:

1.28. «**Պահանջվող փաստաթղթեր**»՝ Պայմանագիր կնքելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթեր, որոնք հաստատում են Ծառայությունից օգտվել ցանկացող անձի, հասցեն, և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

**1. 29. «Պահանջվող տեղեկատվություն»՝** Բաժանորդների կողմից վճարումներ կատարելու համար լրացման ենթակա անհրաժեշտ նվազագույն տեղեկատվություն, որը ներառում է Բաժանորդի անուն-ազգանունը, հասցեն, Անհատական կոդը:

**1. 30. «Անհատական կոդ»՝** մատուցվող Ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու նպատակով Օպերատորի կողմից յուրաքանչյուր Բաժանորդի համար անհատապես սահմանված և վերջինիս տրամադրված թվանշանների համակցություն:

**1. 31. «Իրավատեր»՝** Տեսալսողական ծրագրի տնօրինող, տիրապետող և օգտագործող անձ:

**1. 32. «Ftime» և «FTime max»՝** փաթեթներ, որոնք ներառում են Հեռուստաալիքների վերահաղորդման և առցանց հեռուստատեսային և մեդիա հարթակի միջոցով թվային տեսադարանից ֆիլմերի դիտման, այդ թվում՝ Բաժանորդի ցանկությամբ ֆիլմերի վարձակալության և գնման ծառայություններ: Նշված փաթեթներում ներառվող ծառայությունների մանրամասն նկարագրությունը տրվում է Հավելվածով՝ Բաժանորդի կողմից նշված փաթեթներից որևէ մեկից օգտվելու դեպքում:

## 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**2.1.** Սույն Օֆերտա-կանոնները սահմանում են Բաժանորդին Ծառայությունների մատուցման պայմանները և կարգը:

**2.2.** Օֆերտա-կանոնների ամբողջությամբ և անվերապահ ընդունում է համարվում Բաժանորդի կողմից Հավելվածի ստորագրումը, իսկ Հավելվածը հանդիսանում է Օֆերտա-Կանոնների անբաժանելի մաս:

**2.3.** Սույն Օֆերտա-կանոնների համաձայն Ծառայությունները Բաժանորդին տրամադրվում են միայն Ոչ կոմերցիոն օգտագործման, ՀՀ օրենսդրությանը և Պայմանագրին չհակասող նպատակով և բացառապես Պայմանագրում նշված Տեղադրման հասցեում: Բաժանորդն իրավունք չունի օգտագործել Պայմանագրով մատուցվող ծառայություններն այլ անձանց համանման ծառայությունների մատուցման համար, վերավաճառել կամ որևէ այլ իրավունքով տրամադրել Ծառայություններն այլ անձանց:

**2.4**. Օպերատորը Բաժանորդին հեռուսատալիքներ ներառող յուրաքանչյուր Փաթեթի շրջանակում տրամադրում է մինչև 4 (չորս) հեռուստացույց միացնելու հնարավորություն:

**2.5** Հեռուստաալիքներ ներառող Փաթեթներից օգտվելու Հեռուստաալիքների ցանկը սահմանվում և փոփոխվում է Օպերատորի կողմից, բացառապես Օպերատորի հայեցողությամբ:

**2.6.** Սույն Պայմանագրով Ծառայություններից օգտվելու դեպքում Բաժանորդին տիրապետման և օգտագործման իրավունքով տրամադրվում են Սարքավորումներ, որոնց քանակը սահմանվում է

Հավելվածով: Սարքավորումները Բաժանորդի՝ Տեղադրման հասցեում տեղադրվում է Բաժանորդի կողմից մատնանշված և Օպերատորի հետ համաձայնեցված մասում:

**2.7.** Բաժանորդը տեղեկացված է մատուցվող Ծառայությունների բնույթին, էությանը, բովանդակությանը և դրանք համապատասխանում է իր կարիքներին:

**2.8.** Բաժանորդը տալիս է իր անվերապահ համաձայնությունը օրենքով սահմանված դեպքերում, ծավալով և կարգով մշակելու իր անհատական տվյալները:

**2.9** Դոմոֆոնային սպասարկման մեջ ներառվում են հետևյալ ծառայությունները.

ա/ Դոմոֆոնային ծառայություններից օգտվելու համար դոմոֆոնային բանալիների /չիպի/ տրամադրում:

բ/ բջջային հավելվածի միջոցով մուտքի դռան դիմաց իրականացվող տեսանկարահանմանը առկա (online) ռեժիմով հասանելիության ապահովում.

գ/ Բջջային հավելվածի միջոցով հեռավար կարգով մուտքի դուռը բացելու հնարավորության տրամադրում

դ/ Բջջային հավելվածով տրամադրվող այլ հնարավորությունների իրականացման ապահովում:

**2.10.** Դոմոֆոնին, ինչպես նաև դռանը, փականին, շվեցարին և/կամ մագնիսին դիտավորությամբ պատճառված վնասի հատուցման կամ տեխնիկական վնասվածքների վերացման համար Շենքի (մուտքի) դեպքում բնակարանատերերի/բնակիչների, իսկ Մինիդոմոֆոնային սպասարկման դեպքում Բաժանորդի կողմից վճարվում են (է) առանձին և Պայմանագրով մատուցված Ծառայության արժեքի մեջ չեն ներառվում:

**2.11.** Շենքի մուտքի դռան դիմաց իրականացվող տեսանկարահանման արդյունքները (արխիվը) կարող են պահպանվել Ընկերության մոտ դրա ձևավորման պահից առավելագույնը 5 օրացուցային օր ժամկետով և տրամադրվում են բացառապես օրենքով սահմանված սուբյեկտներին՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Մինիդոմոֆոնային սպասարկման դեպքում արխիվի տրամադրման հնարավորությունը և ծավալը սահմանվում են Հավելվածով:

**2.12.** Բաժանորդի կողմից որևէ Ակցիայով Պայմանագրի կնքման դեպքում Պայմանագրի կնքման պահից 12 ամսվա ընթացքում Բաժանորդը չի կարող օգտվել այլ Ակցիաներից՝ վերակնքելով Պայմանագիրը, բացառությամբ տվյալ Ակցիայի պայմաններով սույն պայմանից տարբերվող այլ պայմաններ սահմանված լինելու դեպքերի:

**2.13.** Հավելվածը կնքվում է սույն Կանոններով սահմանված ձևով ու կարգով Պահանջվող փաստաթղթերը Օպերատորին ներկայացնելու ճանապարհով:

**2.14.** Հավելվածը կնքելու համար Պահանջվող փաստաթղթերի ցանկը սահմանում է Օպերատորը:

**2.15.** Օպերատորը կարող է մերժել Պայմանագրի կնքումը, եթե հայցված Ծառայությունը ստանալու համար անձը չի բավարարում նման Ծառայություն ստանալու համար Օպերատորի կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրել է կեղծ, թերի կամ ոչ հավաստի տեղեկություններ:

**2.16.** Օպերատորն իրավունք ունի նաև մերժել Պայմանագրի կնքումը, եթե մերժումը պայմանավորված է Օպերատորի տեխնիկական հնարավորությունների բացակայությամբ, այդ թվում նաև՝ այն դեպքում, երբ Բաժանորդի կողմից ներկայացված դիմում/հայտում նշված Ծառայությունների մատուցման աշխարհագրական տարածքը դուրս է Սփռման տարածքի սահմաններից կամ պահանջում է չհիմնավորված ծախսեր:

**2. 17.** Բացառապես որևէ փաթեթի մաս չկազմող առանձին դոմոֆոնային ծառայություններից օգտվելու դեպքում Բաժանորդներն իրավունք ունեն նշված ծառայություններից օգտվել Կողմերի միջև կնքված հասարակ գրավոր պայմանագրի հիման վրա՝ Կողմերի համաձայնությամբ սահմանված պայմաններով:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**3.1.** Ընկերությունը մատուցում է սույն Կանոնների 1. 5. կետով սահմանված ծառայություններ: Սույն Կանոններով սահմանված դրույթները կիրառվում են ելնելով Բաժանորդի կողմից Հավելվածով ընտրված Ծառայության որոշակի տեսակից:

**3.2.** Ծառայություններ մատուցվում են Հավելվածում նշված վայրում (Տեղադրման հասցեում) և պայմաններով:

**3.3**. Սույն Պայմանագրով Ծառայություններից օգտվելու դեպքում Բաժանորդին տիրապետման և օգտագործման, իսկ Հավելվածով սահմանված դեպքերում նաև՝ սեփականության իրավունքով (Սարքավորումների վաճառք) տրամադրվում են Սարքավորումներ, որոնց քանակը սահմանվում է Հավելվածով:

**3.4.** Օպերատորը Ծառայությունները մատուցում է պատշաճ կարգով, ձևով և ժամկետներում:

**3.5.** Օպերատորը Ծառայությունների խափանման, ինչպես նաև ի հայտ եկած սխալների և անսարքությունների դեպքում հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացնում է անհրաժեշտ վերականգնողական աշխատանքներ, բացառությամբ եթե խափանումները և/կամ սխալները ի հայտ են եկել սույն Կանոններով սահմանված և/կամ Օպերատորի պատասխանատվությունից դուրս գտնվող հանգամանքներում:

**3.6.** Օպերատորը ինքնուրույն է սահմանում և ժամանակ առ ժամանակ փոփոխում Ծառայությունների ցանկը, սակագնային պլանները/Փաթեթները, դրանց մատուցման պայմանները, կանոնները և գները, ինչպես նաև օրենքով սահմանված պայմանների պահպանմամբ անցկացնում է Ակցիաներ: Օպերատորն իրավունք ունի Փաթեթների և դրանց սակագների փոփոխության վերաբերյալ մեկ ամիս առաջ ծանուցել Բաժանորդին՝ առաջարկելով վերակնքել Պայմանագիրը նոր պայմաններով: Բաժանորդի համաձայնությունը չստանալու և Պայմանագիրը չվերակնքվելու դեպքում ծանուցումս ուղարկելուց մեկ ամիսը լրանալուն հաջորդող հերթական վճարման օրվանից Պայմանագիրը համարվում է լուծված, և Օպերատորը դադարեցնում է Բաժանորդին Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցումը:

**3.7.** Ծառայությունների մատուցման ընթացքում հնարավոր են ընդհատումներ և սահմանափակումներ, որոնք պայմանավորված կարող են լինել ինչպես Օպերատորից կախված հանգամանքներով, այնպես էլ Տեսալսողական ծրագրերի Իրավատերերից կախված հանգամանքներով, ֆորս-մաժորային իրավիճակներով, որոնք դուրս են Օպերատորի վերահսկողությունից: Օպերատորը տեխնիկական անհրաժեշտությունից ելնելով իրավունք ունի Ծառայությունների ծավալների նկատմամբ կարճաժամկետ սահմանափակումներ իրականացնել, որը չի կարող գերազանցել 48 ժամը մեկ ամսվա ընթացքում, ինչը չի դիտարկվում որպես Ծառայությունների խափանում:

**3.8.** Օպերատորը կարող է հեռուստառադիոծրագրերի Իրավատերերի հետ կնքված պայմանագրային պարտավորությունների անհրաժեշտությունից ելնելով կիրառել սահմանափակումներ մատուցվող Ծառայությունների ծավալի նկատմամբ:

**3.9.** Օպերատորը կարող է շաբաթը մեկ անգամ իրականացնել կանխարգելիչ պրոֆիլակտիկ աշխատանքներ, որի ժամանակ հնարավոր է Ծառայության ընդհատում, ինչը չի համարվում Օպերատորի կողմից իր պարտականությունների խախտում և չի առաջացնում պատասխանատվություն:

**3.10.** Օպերատորի կողմից մատուցվող ծառայությունները դադարեցվելու (այդ թվում՝ անկախ լուծման հիմքից պայմանագրի միակողմանի կամ փոխադարձ հաաձայնությամբ լուծման կամ փոփոխվելու ժամանակ, սակայն ոչ ուշ, քան այդ սարքով մատուցվող ծառայությունը դադարելու հաջորդ օրվանից հաշված՝ 15 օրվա ընթացքում սեփական միջոցներով ապամոնտաժել և Օպերատորի ցանկացած սպասարկման կենտրոն վերադարձնել իրեն հանձնված մալուխները, սարք/սարքավորումները, դետալները՝ սարքին և պատշաճ վիճակում (ամբողջական կոմպլեկտայնությամբ)՝ հաշվի առնելով բնական մաշվածությունը, հակառակ դեպքում Բաժանորդը կրում է Պայմանագրի 5.9.-րդ կետով սահմանված պատասխանատվություն: Սարք(-եր)ը վերադարձնելիս Բաժանորդի կողմից ստորագրվում է հանձնման-ընդունման ակտ:

**3.11.** Բաժանորդն իրավունք ունի ժամանակավոր կասեցնել Պայմանագիրը 15-30 օր ժամկետով, 12 ամսվա ընթացքում առավելագույնը մեկ անգամ: Ժամանակավոր կասեցման հայտը/դիմումը Բաժանորդը կարող է լրացնել Օպերատորի ցանկացած տարածքային գրասենյակում կամ հեռախոսակապի միջոցով, իսկ հնարավորության առկայության դեպքում՝ էլեկտրոնային հավելվածի միջոցով: Ժամանակավոր կասեցման ժամանակահատվածը չի ներառվում Պայմանագրի ժամկետում:

**3.12.** Բաժանորդը կարող է Օպերատորի կողմից սահմանված դեպքերում և կարգով փոփոխել Պայմանագրով ընտրված Ծառայությունների տեսակը՝ սահմանված ընթացակարգով Հավելվածի փոփոխություն կամ նոր Հավելված ստորագրելու եղանակով:

**3.13.** Բաժանորդը Ծառայություններից օգտվում է իր կամքով և սեփական ռիսկով: Օպերատորը Ծառայությունը մատուցում է այնպես, ինչպես որ կա (as is) և պատասխանատվություն չի կրում Ծառայությունները Բաժանորդի պահանջմունքներին կամ սպասելիքներին չբավարարելու համար:

**3.14.** Բաժանորդը չի կարող Ծառայությունից օգտվելու իր իրավունքը, ինչպես նաև Ապակոդավորման միջոցները փոխանցել այլ անձի, իրեն մատուցված Ծառայությունը օգտագործել ոչ անձնական և/կամ շահույթ ստանալու նպատակով:

**3.15.** Օպերատորի կողմից տրամադրված Ապակոդավորման միջոցը կարող է օգտագործվել միայն մեկ վերջնակետային սարքավորման համար, բացառությամբ եթե վերջնակետային սարքավորումը Բաժանորդի կողմից օգտագործվում է Հեռուստաալիքների վերահաղորդման ծառայություններ ստանալու համար և Կանոններով նախատեսված այլ դեպքերի:

**3.16.** Ծառայություններից օգտվելու բոլոր հետևանքների պատասխանատվությունը կրում է Բաժանորդը, բացառությամբ Կանոններով այլ բան նախատեսված լինելու դեպքերի: Բաժանորդին տրամադրված Ապակոդավորման միջոցներն այլ անձանց կողմից օգտագործելու բոլոր հետևանքների համար պատասխանատվությունը ևս կրում է Բաժանորդը:

**3.17.** Արգելվում է Բաժանորդի կողմից այնպիսի վերջնակետային սարքավորումների օգտագործումը, որոնք համատեղելի չեն Ցանցի հետ:

**3.18.** Բաժանորդը պարտավոր է կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սահմանված կարգով վճարել մատուցված Ծառայությունների դիմաց, Ծառայություններից օգտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Պայմանագրով և Օպերատորի կողմից սահմանված այլ

կանոններին ու պահանջներին համապատասխան՝ չխախտելով երրորդ անձանց իրավունքները, զերծ մնալ սույն Կանոններին հակասող ցանկացած եղանակով Օպերատորի մատուցած Ծառայություններն օգտագործելուց և Հավելվածի կնքման համար Օպերատորին ներկայացնել հավաստի տեղեկություններ:

**3.19.** Բաժանորդը պարտավոր է չօգտագործել մատուցվող Ծառայություններն այլ անձանց համանման ծառայությունների մատուցման համար, չվերավաճառել կամ որևէ այլ իրավունքով չտրամադրել Ծառայությունները այլ անձանց:

**3.20.** Բաժանորդն իրավունք ունի տեխնիկական հնարավորության սահմաններում ստանալ Ծառայությունները, ինչպես նաև տեղեկատվություն ստանալ առաջարկվող Ծառայությունների/Փաթեթների, կիրառվող Ամսավճարների, գանձված գումարների մասին:

**3.21.** Օպերատորը երաշխավորում է, որ իր կողմից Տեսալսողական ծրագրերի վերահաղորդումն իրականացվում է օրինական հիմունքներով: Օպերատորը պատասխանատվություն չի կրում իր կողմից վերահաղորդվող Տեսալսողական ծրագրերի բովանդակության համար:

**3.22.** Ստորագրելով Հավելվածը՝ Բաժանորդն ընդունում է, որ Ծառայությունների մատուցման նպատակով Օպերատորին տրամադրած հեռախոսահամարները կամ էլեկտրոնային հասցեները կարող են օգտագործվել Ծառայությունների մատուցման հետ կապված վերջինիս կարճ հաղորդագրություններ, էլեկտրոնային նամակներ կամ հեռախոսազանգեր ուղարկելու նպատակով:

## 4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ և ՊԱՅՄԱՆՆԵՐ

**4.1.** Բաժանորդը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարում է Պայմանագրով մատուցվող Ծառայությունների դիմաց:

**4.2.** Բաժանորդի կողմից վճարումները կատարվում են կանխիկ՝ Օպերատորի սպասարկման կենտրոններում վճարում կատարելու միջոցով և/կամ անկանխիկ՝ Օպերատորի հաշվին փոխանցելու միջոցով՝ (այդ թվում նաև՝ օնլայն վճարային համակարգերով, վճարային քարտերի միջոցով)՝ Օպերատորի կողմից տրամադրված Վավերապայմաններին համապատասխան:

**4.3.** Բաժանորդի կողմից ծառայությունների մատուցման համար վճարումները կատարվում են կանխավճարային եղանակով: Յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատուցվելիք ծառայությունների համար վճարումը կատարվում է Հավելվածով նշված օրը:

**4.4.** Բաժանորդի ցանկությամբ նրան տիրապետման և օգտագործման իրավունքներով տրամադրում է լրացուցիչ Սմարթ Բոքս/Smart Box սարք(եր) և/կամ WI-FI (վայ-ֆայ) սարք(եր) և/կամ Fnet Smart Home հավելվածից օգտվելու հնարավորություն՝ Դոմոֆոնը կառավարելու նպատակով: Նշված սարքերից յուրաքանչյուրի տիրապետման և օգտագործման իրավունքով ձեռքբերման դեպքում Բաժանորդին մատուցվող ծառայության Ամսական վճարման չափն ավելանում է սարքերի քանակը բազմապատկած համապատասխանաբար 2500 և 1000 ՀՀ դրամով, իսկ Fnet Smart Home հավելվածից օգտվելու թույլտվության դիմաց՝ ամսական 600 ՀՀ դրամով:

**4.5.** Հավելվածով սահմանված և Բաժանորդի կողմից ընտրված տեսախցիկների տեղադրման և սպասարկման ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտության դեպքում և եթե դա բխում է մատուցվող ծառայության բնույթից և/կամ պայմաններից, պարտավորվում է Օպերատորից գնել տեսախցիկ, որի դիմաց պարտավորվում է Օպերատորին կանխավճարային եղանակով միանվագ վճարել 36.000 (երեսունվեց հազար) ՀՀ դրամ:

**4.6** Հավելվածով սահմանված և Բաժանորդի կողմից ընտրված Մինի դոմոֆոնի միջոցով տեսահսկման ծառայություններից և Մինիդոմոֆանային սպասարկումից օգտվելու համար Բաժանորդը պարտավորվում է Օպերատորից գնել Մինի դոմոֆոն, որի դիմաց պարտավորվում է Օպերատորին կանխավճարային եղանակով միանվագ վճարել 166.800 (մեկ հարյուր վաթսունվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար:

**4.7** Դոմոֆոնային ծառայության դեպքում առաջին երկու բանալիները Բաժանորդին տրամադրվում են անվճար: Յուրաքանչյուր հաջորդ դոմոֆոնային չիպի արժեքը կազմում է 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ:

**4. 8.** Բաժանորդներն իրավունք ունեն եռօրյա ժամկետով վարձակալել կամ գնել Ftime կամ FTime max փաթեթների շրջանակներում դիտման համար տրամադրվող ֆիլմերը: Մեկ ֆիլմի եռօրյա ժամկետով վարձակալության արժեքը կազմում է 300 դրամ, իսկ մեկ ֆիլմի գնման արժեքը՝ 500 դրամ:

**4.9.** Բաժանորդը պարտավոր է կատարել Պայմանագրով սահմանված վճարումները նաև այն դեպքում, եթե չի օգտվել Ծառայությունից Բաժանորդի տարածքից բացակայելու կամ Օպերատորից անկախ այլ պատճառներով:

**4.10.** Բաժանորդի կողմից Հավելվածով սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի կասեցնել կամ դադարեցնել Ծառայությունների մատուցումը:

**4.11.** Ծառայությունը մատուցելու համար կարող են սահմանվել միացման և այլ վճարներ, որոնք սահմանվում են Հավելվածով:

**4.12.** Բաժանորդի կողմից սխալ վճարումներ կատարելու դեպքում (գումարի սխալ չափ կամ վճարողի վերաբերյալ սխալ տեղեկություններ) Օպերատորն իրավասու է կատարել համապատասխան ուղղումներ բացառապես Բաժանորդի դիմումի հիման վրա: Վճարահաշվարկային համակարգերի միջոցով վճարում կատարելու դեպքում սխալ վճարումներն ուղղվում են տվյալ վճարահաշվարկային համակարգի կողմից:

**4.13.** Բանկային վճարումները, ինչպես նաև կանխիկ եղանակով կատարված վճարումները, արտացոլվում են Օպերատորի բիլինգային համակարգում՝ մինչև վճարման կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

**4.14.** Բաժանորդի օգտին վճարում կատարող ցանկացած անձ համարվում է Բաժանորդի կողմից վճարման համար պատշաճ կերպով լիազորված և այդ լիազորության իրականացման նպատակով վերջինի անունից և համար գործող:

Վճարային քարտերով առցանց վճարումներ կատարելիս Բաժանորդը պարտավոր է լրացնել Պահանջվող տեղեկատվությունը և պահպանել նման վճարումների համար սահմանված անվտանգության կանոնները, իսկ Օպերատորը պատասխանատվություն չի կրում Բաժանորդի կողմից անվտանգության կանոնները չպահպանելու համար:

**4.15.** Բաժանորդի վճարման պարտավորությունը համարվում է կատարված վճարման ենթակա գումարը Օպերատորի հաշվեհամարին կամ դրամարկղ մուտքագրման պահից:

Վճարման ձևի առանձնահատկություններից ելնելով՝ մատուցված որոշ ծառայությունների համար Բաժանորդից գանձվող գումարները կարող են Բաժանորդի անձնական հաշվում արտացոլվել ուշացումով:

**4.16.** Վճարումն ուշացնելու դեպքում, Օպերատորն իրավունք ունի ուշացրած յուրաքանչյուր օրվա համար ժամկետանց գումարի նկատմամբ հաշվարկել տույժ՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

**4.17.** Օպերատորն իրավունք ունի լրացուցիչ ծառայություններ մատուցելու դեպքում Բաժանորդից գանձել առանձին վճար:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

**5.1.** Օպերատորը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից Ծառայությունների մատուցման ընթացքում խոչընդոտներ առաջացնելու համար, ինչպես նաև երրորդ անձանց կողմից Օպերատորի ցանցի միջոցով Բաժանորդին հասցված որևէ այլ վնասի համար:

**5.2.** Օպերատորը որևէ վերահսկողություն չի իրականացնում Ծառայությունների մատուցման համար գործող Ցանցով տեղափոխվող տվյալների նկատմամբ և պատասխանատու չէ Բաժանորդի կողմից ստացված և կամ ուղարկված տեղեկության և բովանդակության ճշտության և օրինականության համար: Օպերատորի ցանցի միջոցով տեղափոխվող ցանկացած տեղեկություն կամ բովանդակություն օգտագործվում է Բաժանորդի ռիսկով և պատասխանատվությամբ:

**5.3.** Օպերատորը պատասխանատվություն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:

**5.4**. Օպերատորը պատասխանատու չէ մատուցվող ծառայությունների հնարավոր խոտանի համար, եթե Բաժանորդը հրաժարվել է սույն Կանոններով նշված Տեղադրման հասցեում ծառայության միացման համար օգտագործվող Օպերատորի կողմից տրամադրվող մալուխից:

**5.5.** Օպերատորը պատասխանատվություն է կրում բացառապես իր մեղքով ոչ պատշաճ որակի ծառայությունների մատուցման համար: Վերջին 10 տարիներից ավելի վաղ արտադրված, անհայտ ծագում ունեցող, վնասված կամ որևէ անսարքություն ունեցող հեռուստացույցի դեպքում, Օպերատորը պատասխանատու չէ հեռարձակման հնարավոր խոտանի համար:

**5.6.** Օպերատորը պատասխանատվություն է կրում այն Սարքերի, Սարքավորումների, մալուխների կամ այլ տեխնիկական լուծումների և բացառապես դրանց միջոցով ստացված Ծառայության որակի համար, որոնք գտնվում են իր պատասխանատվության և վերահսկողության ներքո:

**5.7.** Օպերատորը պատասխանատվություն չի կրում Ծառայության որակի վատթարացման համար, եթե դա պայմանավորված է Բաժանորդի վերջնակետային սարքավորման մալուխների կամ այլ տեխնիկական լուծումների անսարքությամբ կամ համապատասխան տեխնիկական հնարավորությունների բացակայությամբ, Ցանցում առաջացած վթարներով և Օպերատորի վերահսկողությունից դուրս գտնվող այլ խնդիրներով:

**5.8.** Բաժանորդի կողմից Ծառայությունների ոչ սպառողական, կոմերցիոն նպատակով օգտագործման դեպքում Օպերատորն իրավունք ունի պահանջել վճարելու տույժ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

**5.9.** Բաժանորդին տրամադրված Սարքավորումները Բաժանորդի մեղքով վնասվելու /կորսվելու/ և /կամ/ ոչ Օպերատորի մեղքով որևէ հիմքով օգտագործման համար ոչ պիտանի դառնալու և /կամ/ Պայմանագրի լուծման դեպքում Օպերատորի պահանջով Օպերատորին չհանձնելու կամ վնասված վիճակում հանձնելու դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդից պահանջել վճարել տուգանք, որը հաշվարկվում է սույն կետով նկարագրված որևէ խնդիր ունեցող յուրաքանչյուր Սարքավորման համար առանձին-առանձին՝ տվյալ Սարքավորման քանակը բազմապատկելով 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամով:

**5.9.1.** Օպերատորի համար միայն վերջինիս հետ Պայմանագիր կնքած Բաժանորդն է հանդիսանում միակ պատասխանատուն՝ սույն Կանոններով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

**5.9.2.** Օպերատորն իրավունք ունի Բաժանորդից պահանջել վճարել իր բոլոր այն վնասները, որոնք կրել է վերջինիս կողմից Կանոնները խախտելու հետևանքով:

**5.9.3.** Սույն Կանոններին և Պայմանագրին ոչ համապատասխան Ծառայություններ մատուցելու համար Օպերատորի պատասխանատվության չափը չի կարող գերազանցել Պայմանագրի հիման վրա Բաժանորդին մատուցվող Ծառայության կամ Փաթեթի Ամսական վճարման չափը:

**5.9.4.** Բոլոր դեպքերում Բաժանորդը չի կարող Օպերատորից պահանջել վճարել անուղղակի վնասները և բաց թողնված օգուտը:

**5.10.** Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Օպերատորը կամ Բաժանորդն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Օպերատորը կամ Բաժանորդը չէին կարող ողջամտորեն կանխատեսել կամ կանխարգելել: Մասնավորապես՝ այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, սողանքը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, մայրուղային ենթակառուցվածքների խաթարումը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ընդունված ակտը, համաճարակները և այլն, որոնք անհնար են դարձնում Պայմանագրով պարտավորությունների պատշաճ կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Օպերատորը կամ Բաժանորդն իրավունք ունեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես 5 (հինգ) օր առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին:

**5.11.** Պայմանագրից ծագող և/կամ/ Պայմանագրի առարկայի վերաբերյալ կողմերի միջև առկա կամ հնարավոր բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ սույն Կանոնների 5.12. կետով նախատեսված կարգով կամ օրենքով սահմանված նոտարական կամ դատական կարգով:

**5.12.** Կողմերի միջև կնքված ծառայությունների մատուցման Պայմանագրերի հիման վրա առաջացած վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային կարգով և ենթակա են «ԼԻԳԸԼ ԸՆԴ ԹԱՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը կից մշտապես գործող «Արբիտրաժային հաստատություն» հիմնարկի (**այսուհետ՝ Հաստատություն**) քննությանը:

**5.12.1.**Հաստատությունում գործի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, Հաստատության կանոնադրությանը և կանոնակարգին համապատասխան:

**5.12.2.** Կողմերը սահմանում են, որ արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է և գործը քննող արբիտրները նշանակվում են Հաստատության կանոնակարգին համապատասխան:

**5.12.3.** Կողմերը պայմանավորվում են, որ վեճի քննությունը կիրականացվի միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման:

**5.12.4.** Վեճերը լուծվում են ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան:

**5.12.5.** Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ ՀՀ ք. Երևանը:

**5.12.6.** Սույն կանոնների 5.12. կետի դրույթներն ուժի մեջ են մտնում Կողմերի միջև սույն Կանոնների անբաժանելի մասը կազմող Հավելվածի կնքման պահից և գործում են Հաստատության գործունեության ողջ ժամանակահատվածում:

**5.12.7.** Սույն դրույթը որևէ կերպ չեն սահմանափակում Ընկերության իրավունքը՝ իր և Բաժանորդների միջև կնքվելիք և/կամ կնքված Պայմանագրերի հետ կապված վեճերի լուծումը վերապահել այլ արբիտրաժային հաստատության կամ դրանք լուծել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով (ներառելով, բայց չսահմանափակելով՝ նոտարի կողմից վճարման կարգադրություն արձակելը):

## 6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ.

**6.1.** Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանված կարգով՝ Հավելվածում փոփոխություն կատարելու կամ նոր Հավելված կնքելու եղանակով, որոնք հանդիսանում են Պայմանագրի/Կանոնների անբաժանելի մաս:

**6.2**. Որոշակի ժամկետով կնքված Պայմանագիրը յուրաքանչյուր անգամ ինքնաբերաբար երկարաձգվում է նույն ժամկետով, եթե Պայմանագրի ժամկետը լրանալուց 1 (մեկ) ամիս առաջ Կողմերից որևէ մեկը սույն կանոններով սահմանված ծանուցման կարգով չի տեղեկացրել մյուս կողմին Պայմանագիրը լուծելու իր միանշանակ և անվերապահ մտադրության մասին: Պայմանագրի երկարաձգման դեպքում Պայմանագիրը գործում է նույն պայմաններով, բացառությամբ կիրառված Ակցիայի պայմանների, եթե այլ բան սահմանված չէ Ակցիայի պայմաններով և/կամ Հավելվածով: Երկարաձգումների քանակը սահմանափակված չէ:

**6.2.1.** Օպերատորը պարտավորվում է Պայմանագրի ժամկետի ավարտից առնվազն 5 օր առաջ ծանուցում ուղարկել Բաժանորդին, որը պետք է պարունակի հիշեցում Կողմերի միջև կնքված Պայմանագրի ավարտին մնացած ժամկետի և Կանոններով սահմանված Պայմանագրի ինքնաբերաբար երկարաձգման պայմանների մասին:

**6.2.2.** Պայմանագրի ինքնաբերաբար երկարաձգումից մեկ ամսվա ընթացքում Բաժանորդի կողմից ծառայություններից հրաժարվելու դեպքում վերջինս չի կրում Կանոնների 7.4. կետով սահմանված պարտավորություն, սակայն միաժամանակ չի ազատվում Կանոններով սահմանված մյուս պարտավորությունների կատարումից՝ կրելով դրանց չկատարման համար Կանոններով, իսկ Կանոններով սահմանված չլինելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվություն:

**6.3.** Եթե կիրառված Ակցիայի արդյունքում Պայմանագրով ծառայությունների մատուցման դիմաց վճարման ենթակա Ամսավճարը սահմանվել է ավելի ցածր արժեքով (զեղչ), Պայմանագրի երկարաձգման դեպքում Ակցիայի (զեղչի) պայմանները չեն պահպանվում և գործում է Հավելվածով սահմանված Ամսավճարի առանց Ակցիայի (զեղչի) կիրառման:

**6.4.** Հավելվածով սահմանված Պայմանագրի ժամկետի ընթացքում Բաժանորդն իրավունք ունի փոփոխել ընտրված ծառայությունը և ընտրել Օպերատորի կողմից մատուցվող այլ ծառայություն, եթե փոփոխված Ծառայության դիմաց վճարման ենթակա Ամսավճարն ավել է մինչ այդ ընտրված Ծառայության Ամսավճարից:

**6.5.** Կանոնների 6.4 կետում սահմանված դեպքում տեղի է ունենում Պայմանագրի փոփոխություն և կիրառման ենթակա չէ Կանոնների 7.1 կետով սահմանված կարգավորումը, բացառությամբ Կանոնների 6.3. կետով սահմանված դեպքի:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

**7.1** Օպերատորը կարող է առանց Բաժանորդին ծանուցելու միակողմանի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց՝ կասեցնելով կամ դադարեցնելով ծառայությունների մատուցումը, ապամոնտաժել մալուխները, Սարքերն ու դետալները՝ իր հայեցողությամբ պահանջելով սույն կանոնների 7.4. կետով սահմանված փաստացի կատարված ծախսերի գումարի վճարում, եթե Բաժանորդը չի վճարում ծառայության դիմաց առնվազն 1/մեկ/ ամիս կամ խախտել է Պայմանագրի որևէ այլ պայման, ինչպես նաև վճարել Կանոնների 5.9. կետով սահմանված պահանջներից որևէ մեկի խախտման դեպքում նույն կետով սահմանված տուգանքը: Պայմանագրի լուծումը (դադարեցումը) չի հանգեցնում Բաժանորդի կողմից Պայմանագրի հիման վրա Օպերատորի հանդեպ ունեցած պարտավորությունների կամ պատասխանատվության դադարեցմանը (վերացմանը):

**7.2.** Բաժանորդն իրավունք ունի վաղաժամկետ՝ մինչև Պայմանագրով ժամկետը լրանալը հրաժարվել բոլոր Ծառայություններից կամ դրանց մի մասից: Բաժանորդը ծառայությունից հրաժարման պատճառաբանված հայտը/դիմումը պարտավոր է լրացնել Օպերատորի ցանկացած տարածքային գրասենյակում կամ իրականացնել հեռախոսային կապի միջոցով, իսկ հնարավորության առկայության դեպքում՝ էլեկտրոնային հավելվածի միջոցով:

**7.3.** Այն դեպքում, երբ Բաժանորդը հրաժարվում է այն Ծառայություններից, որոնց մատուցումը հանդիսանում է Բաժանորդի կողմից ընտրված մյուս Ծառայություններից օգտվելու նախապայման, ապա Բաժանորդը մյուս Ծառայություններից ևս համարվում է հրաժարված: Ծառայությունների մի մասից հրաժարվելու դեպքում մնացած Ծառայությունների մասով Պայմանագրի ժամկետը շարունակում է հոսել ընդհանուր կարգով:

**7.4** Հավելվածում նշված որոշակի ժամկետով Ծառայություններից Պայմանագրի ժամկետից շուտ հրաժարվելու կամ սույն կանոններով սահմանված այլ դեպքերում Բաժանորդը պարտավոր է Օպերատորի պահանջով 5 օրվա ընթացքում Օպերատորին վճարել Օպերատորի կողմի Ծառայությունների մատուցման նպատակով փաստացի կատարած ծախսերի հանրագումարը, որը կազմում է 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ:

## 8. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

**8.1.** Կողմերը փոխադարձ օրենքով կամ Պայմանագրով իրենց վերապահված իրավունքների ու պարտականությունների իրացման, Պայմանագրի վերաբերյալ ցանկացած տեղեկատվության, հայտարարության, դիմումի, ակտի, հաշվարկային փաստաթղթի կամ այլ խնդրի մասին միմյանց ծանուցում են Ընկերության էլեկտրոնային հավելվածի միջոցով, իսկ դրա միջոցով ծանուցումներն իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում Կողմերը իրենց ընտրությամբ ծանուցումները կարող են ուղարկել էլեկտրոնային եղանակով (հեռախոսային կարճ հաղորդագրության (sms), էլեկտրոնային փոստի և այլ ձևով), փոստով կամ հանձնել առձեռն դրա ստանալու իրավունքն ունեցող անձանց: Էլեկտրոնային հավելվածի միջոցով ծանուցումները ուղարկվում են դրանով սահմանված եղանակով: Էլեկտրոնային հավելվածի միջոցով ուղարկված

ծանուցումը համարվում է ստացված ուղարկելուց մեկ աշխատանքային օր հետո: Փոստային ծանուցումները ուղարկվում են Հավելվածում նշված հասցեներով: Փոստով ուղարկված ծանուցումները համարվում են ստացված ծանուցումը ուղարկելուց հետո 3 (երեք) աշխատանքային օր հետո, եթե չի ապացուցվում, որ փաստացի ուշ ստանալը եղել է փոստային ծառայության մեղքով: Էլեկտրոնային եղանակով ծանուցումները ուղարկվում են Հավելվածում նշված կողմերի էլեկտրոնային հասցեներին կամ հեռախոսահամարներին: Էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցումը համարվում է ստացված ուղարկելուց մեկ աշխատանքային օր հետո:

8. 2. Կողմերի անվանման, հասցեների, անձնագրային տվյալների, բանկային վավերապայմանների, հեռախոսահամարների, էլեկտրոնային փոստի հասցեների կամ Կանոնների անբաժանելի մասը կազմող Հավելվածում նշված այլ տվյալների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց սույն Կանոններով նախատեսված որևէ ծանուցման եղանակով տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին: Կողմերը հաստատում են, որ սույն Կանոնների անբաժանելի մասը կազմող Հավելվածում նախատեսված հասցեներով միմյանց ծանուցումներ ներկայացվելու դեպքում Կողմերը կհամարվեն պատշաճ ծանուցված: Այն դեպքում, երբ սույն Պայմանագրով նախատեսված հասցեն փոփոխած կողմը Պայմանագրի մյուս կողմին սույն կետով սահմանված կարգով չի ծանուցել հասցեի կամ հեռախոսահամարի կամ էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխության վերաբերյալ, ապա Հավելվածում նշված հասցեով կամ հեռախոսահամարով կամ էլեկտրոնային փոստի հասցեով կատարված ծանուցումները ևս համարվում են պատշաճ ծանուցում:

8. 3. Կողմերից որևէ մեկն իրավասու չէ առանց մյուս կողմի նախնական գրավոր համաձայնության բացահայտել սույն Կանոնների անբաժանելի մասը կազմող Հավելվածի/Հավելվածների որևէ էական տեղեկություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ բացահայտումը պահանջվում է կիրառելի օրենքով կամ իրավասու մարմնի կողմից կամ ողջամտորեն անհրաժեշտ է կողմի սովորական գործարար գործունեության իրականացման կամ շահերի պաշտպանության համար:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**9.1.** Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում Հավելվածը Կողմերի կողմից սահմանված կարգով ստորագրվելու պահից: Պայմանագրի կնքմամբ Կողմերի միջև Պայմանագրով սահմանված և միևնույն Տեղադրման հասցեում մատուցվող ծառայությունների վերաբերյալ կնքված այլ պայմանագրերը և համաձայնագրերը համարվում են լուծված:

**9.2.** Բաժանորդը Օպերատորին լիազորում է Բաժանորդի համար ստեղծել և տրամադրել մուտք դեպի պարզ էլեկտրոնային ստորագրություն՝ համաձայն էլեկտրոնային համագործակցության պայմանների: Բաժանորդը համաձայնվում է Օպերատորի հետ գործարքներ կնքելիս, փոխելիս, դադարեցնելիս/լուծելիս օգտագործել նաև պարզ էլեկտրոնային ստորագրությունը՝ որպես ձեռագիր ստորագրության անալոգ:

**9.3.** Պարզ էլեկտրոնային ստորագրության միջոցով ներկայացված Բաժանորդի դիմումները, հրահանգները և այլ գործողությունները գործողություններ են, որոնք արտացոլում են Բաժանորդի համապատասխան իրական կամքը և ունեն լիարժեք ապացուցողական և իրավաբանական ուժ: Պայմանագրի անբաժանելի մասն է կազմում էլեկտրոնային համագործակցության

պայմանները, որոնց Բաժանորդը ծանոթ է, համաձայն է և պարտավորվում է հետևել: Կողմերը համաձայնվել են փաստաթղթերը (ներառյալ Կանոնների/Պայմանագրի Հավելվածը, կատարված աշխատանքների վերաբերյալ Ակտերը և այլ փաստաթղթերը) ստորագրել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միջոցով՝ օգտագործելով սույն կանոնների 9.2. կետով սահմանված Բաժանորդի պարզ էլեկտրոնային ստորագրությունը:

9.4. Սույն Կանոններով նախատեսված պարզ էլեկտրոնային ստորագրության միջոցով ստորագրելով սույն Կանոնների անբաժանելի մասը կազմող Հավելվածը/Հավելվածները՝ Բաժանորդը հավաստում է, որ ամբողջությամբ ծանոթացել է սույն Կանոններին և դրա անբաժանելի մասը կազմող Հավելվածի/Հավելվածների պայմաններին, այդ թվում պատասխանատվություն սահմանող պայմաններին, համաձայն է և ընդունում է նշված պայմանները:

9. 5. Սույն կանոնները և դրան կից փաստաթղթերը (Հավելված, այլ կանոններ) կազմված են հայերենով: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում հայերենին չտիրապետող Բաժանորդների կողմից Հավելվածի ստորագրմամբ Պայմանագրի կնքման և դրա հետևանքների համար: Բաժանորդը պարտավոր է ինքնուրույն՝ իր ջանքերով և միջոցներով ապահովել դրանց ծանոթնալը, որի մասին Ընկերությունը մինչև Պայմանագրի կնքումը Բաժանորդի համար հասկանալի լեզվով (անգելերեն կամ ռուսերեն) տեղեկացնում է Բաժանորդին:

**9.6.** Սույն Կանոններն ուժի մեջ են մտնում Ընկերության պաշտոնական կայքում հրապարակման պահից: Ընկերությունը իր հայեցողությամբ սույն Կանոնները փոփոխում, լրացնում կամ նոր խմբագրությամբ է ընդունում, որոնք ուժի մեջ են մտնում Ընկերության պաշտոնական կայքում հրապարակման պահից: